Տրամագիծը ուժանագիծի ամենամեծ լարն ե:

6. Եթե թերթի թղթի վրա զծաղրենք շրջանագիծ և զբանից շրջան կտրենք, առաջ անցկացնենք տրամադրիծ և դրա ուղղությամբ շրջանը ծալինք. այդ դեպքում նրա յերկու մասերը կը համեմկնեն. հետևապես՝

Տրամագիծը ուղղան ու շրջանագիծը կիսում են, այլ խստելի բաժանում են յերկու կիսաշրջանների յեկա յերկու կիսաշրջանագիծի:

Լարը նույնական յերկու մասի յի բաժանումը շրջանն աւ շրջանագիծը, բայց այդ մասերն իրար հաջատար չեն, մեկը փոքր և կիսաշրջանագիծից, մյուսը՝ մեծ: Յերբ ասվում են, վոր լարը ձգում և աղեղը, նկատի յեն առնում փոքր աղեղը, յեթե այստեղ վորեն հատուկ մեկնաբանություն. չկա:

5. Յեթե շրջանի մեջ գծված են յերկու շառավիղ ՕԱ և ՕԲ (նկ. 53), առաջ շրջանի այն մասը, զոր սահմանափակված և այդ շառավիղներով (ՕԱ և ՕԲ) և ԱՄԲ ակեղով, կոչվում են սեկտոր (նկարի վրա սեւացրած մասը): Հասկանալի յի, զոր շրջանի չուսուցրած մասն եւ, վորի աղեղը մեծ է կիսաշրջանագիծը, նույնական սեկտորը եւ Այստեղ եւ յեթե մեջն հաւառկ մեկնաբանություն չկա, խոսքը վերաբերում է փոքր աղեղի սեկտորին:



Նկ. 53

Հարցեր յեկ վարժություններ.

1. Գծագրեցեք յերկու համակենտրոն շրջանագծեր տարբեր շառավիղներով: Այդ բառափոխերն իրար հարաբերություն անհպիս, ինչպիս 2:5, իսկ ողակի լայնությունը 11,7 մ է: Գտեք շրջանագծի շառավիղները:

2. Գծագրեցեք այն շրջանագիծը, զորի շառավիղը՝ $R=2$ մ: Այդ շրջանագիծի մեջ անցկացրեք ՕԱ շառավիղը և սիսելով Ա կետը շրջանութիւնը մեջ հաջորդաբար ներդնեցեք մի բանի լարեր շառավիղի լորկարութիւն, այսնքն՝ 2 մ: Վերջին լարի ծալը պետք է համեմկնի Ա կետի հետ Բանի համաստ աղյունների կրածանվի շրջանագիծը: Ի՞նչպես են կոչվում այն փակ պատճելը զորի կողմերը հանգիստանում են լարեր:

3. Թանի՛ արամագիծ կտրելի յի անցկացնել շրջանագիծի մեջ: Հավասար կլինեն նրանք, թե դուք

4. Շրջասագիծը մեջ անցկացրեք յերկու տրամագիծ: Իրար հատելով ինչպիսէ մասեր կսատցին:

5. Ողափեռով 2-րդ խորըից, ցոյց ափեք, թե ինչպես պետք է աջանը ըստ ժամկետի 6 հավասար սեկտորների:

6. Շրջանակ ծի շառավիղը 10,5 մ է: Դանք ամենամեծ լարի յերկարությունը:

7. Մեկ տված շրջանադր տրամագիծը 12 մ է: Համակենտրոն շրջանագիծի շառավիղը յերկու անգամ փոքր և ավելից վորքան և համակենտրոն շրջանագիծի աղաքաղաքական:

VI. ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ

§ 1. ԱՆԿՅՈՒՆ. ՈՒՂԻՆ, ՍՈՒՐ ՅԵՎ ԲՈՒԺ ԱՆԿՅՈՒՆ

1. Ա կետից անց և կացրած ՄԱ և ՄԲ հառագայթները (նկ. 54), վորոնք կոչվում են անկյուն: Ա կետը կոչվում է անկյան գագաթ, իսկ ՄԱ և ՄԲ հառագայթները՝ անկյան կողմեր: Անկյունը նշանակվում է յերեք տառով, մեկը զրվում է անկյան գագաթի, մյուս յերկուուն եւ՝ կողմերի մոտ: Անկյուն նշանակող յերեք տառերից այն, զոր գագաթը մոտ եւ ողջում, գրվում է մեջտեղը: «Անկյուն» բառը սովորաբար փոխարինվում է \angle նշանով: Գրում ենք \angle ԱՄՅ կոմ \angle ՅՄԱ և կարդում՝ անկյուն ԱՄՅ կամ անկյուն ՅՄԱ:



Նկ. 54

Նկ. 55

Յերբեմն անկյունը, յերբ դա կարելի յի շփոթել ուրիշ անկյուն հետ, նշանակում են գագաթի մի տառով, որինակ, \angle ԱՅ յերբեմն ել յերկու կողմերի միջև գագաթի մոտ կրված տառով կամ թվով (փարբատառով): \angle ա կամ $\angle 1$:


2. Բնդունենք, թե ՄԱ և ՄԲ բարակ տախտակա շերտերի ժայրերը միացած են հողակապով (նկ. 55): Յեթե ՄԱ շերտը թողնում ենք անշարժ, իսկ ՄԲ շարժում ենք նշված ոլաքի ուղղությամբ, անկյունը մեծանում է: Իսկ յեթե ՄԲ շարժենք հակառակ ուղղությամբ՝ անկյունը կփոքրանա: Անկյան մեծության մասին մենք զատում ենք նրա մի կողմից մյուսի նկատմամբ ուր-

վորքան ավելի մեծ և $\angle \text{AMB}$, նույնքան ել ավելի մեծ և KK_1 պղեղ:

Ճ քննության ամենք այժմ մի քո՞նի հաստիկ անկյունները Յեթե AB ճառագայթը քառորդ պտույտ կատարի (նկ. 59),


այսինքն՝ KK_2 համաստիկի ըրջանագծի $\frac{1}{4}$ -ին, ապա համապատասխան անկյունը կկոչվի ուղիղ:

Ուղղաձիգ և նորիզոնական յերկու ուղիղ գծեր իրար հանգիստով կազմում են ուղիղ անկյուն: Այդպիսի յին նաև ուղղանգյան և քառակուսու անկյունները:



Նկ. 56


57-րդ նկարում ցույց են տրվում անկյան հետանիութեածանալը MB կողմը մյուսից հեռացնելու հետևանքով: Սկզբնական գիրքում անկյան այդ իրկու կողմերը՝ MA և MB համընկնում են: Այդ դեպքում ընդունվում են առել՝ մենք ունենք վերո անկյուն:




Նկ. 57

3. AMB անկյան MB կողմի վրա նշենք մի վորեկ կետ K : Պատելով MB կողմը լարքի ուղղությամբ հետևենք այդ կետի շարժմանը (նկ. 58): MB կողմը պատելին K կետը միշտ ել նշեն հետովության վրա յէ գտնվում M -ից, այսինքն՝ նա սկսում եւ զծել ըրջանագծի աղեղ M կենտրոնով և MK -ին համաստ շառավիղով:


Եթեր MB լրիվ պատելով M -ի շուրջը նորից կհամընկնի MA -ին, K կետը դժամ կլինի ըրջանագիծ: Նշանակում են անկյունը մեծացնելով մեծանում են նաև KK_1 աղեղը, և վորքան մեծանում են KK_1 աղեղն, այնքան ել մեծանում են $\angle \text{AMB}$ և ընդհակառակը:



Նկ. 58



Նկ. 59



Նկ. 60

Յեթե MB ճառագայթը իր պտույտի կեսը կատարի, այն ժամանակ K կետը կգծի ՝ KK_3 (նկ. 60). համապատասխան AMB անկյունը կոչվում եւ բացված անկյունն Այդ գեղքում անկյան MA և MB կողմերը հակադիր ուղղություն ունեն և կազմում են մի ուղիղ (արամագիծ՝ KK_3):


Բացիած անկյունը հավասար ել յեկու ուղիղ անկյան:

Ուղիղ անկյունը լրիվ պտույտի $\frac{1}{4}$ -ին ե հավասար, ուստի՝ Բոլոր ուղիղ անկյունները հավասար են, ինչպես յեկ հավասար են բայց բացիած անկյունները:


MB լրիվ $\frac{1}{4}$ պտույտ ևս, կստանանք մի անկյունն, վորն ավելի մեծ և բացիած անկյունից և հավասար ե Յ ուղիղ անկյան (նկ. 61):

Վերջապես՝ MB լրիվ գարձյալ $\frac{1}{4}$ պտույտ, կտեսնենք, վոր MB կհամընկնի MA -ին: Այս գեղքում կստացվի լրիվ անկյուն, այսինքն՝ հավասար 4 ուղիղ անկյան (նկ. 62):

5. MA և MB յիրկու ուղիղները (նկ. 59), վորոնք հատվեալով ուղիղ անկուսն են կազմում, կոչվում են փոխադարձաբար ուղղահայաց — MB-ն ուղղահայաց և MA-ին և ընդհան էառակը՝ MA-ն ուղղահայաց և MB-ին. Ճիշտ նույն ձևով ել




Նկ. 61



Նկ. 62

(նկ. 60), MK₂ ուղղահայաց և KK₃-ին, և KK₃-ը՝ MK₂-ին «Ուղղահայաց» բառը փոխարժնում են \perp նշանով, ուստի և զրում են (նկ. 61) KK₃ \perp K₂K₄ կամ K₂K₄ \perp KK₃ և կարգում են՝ KK₃ ուղղահայաց և K₂K₄-ին կամ K₂K₄ ուղղահայաց և KK₃-ին:



Նկ. 63


Նկ. 64

6. Ուղղահայաց տնտկացնելու համար ուղտվում են գծապական յեռանկյունուց (նկ. 63), վորի $\angle \text{AMK}$ ուղիղ ե, այսինքն՝ AM \perp MK, կամ MK \perp AM-ին:

Խնդիր — Տված ե CD ուղիղը, հարկավոր և ուղղահայաց տանի դրան (նկ. 64):


Խուծում — Գծադրախան յեռանկյունը դնենք նկարի վրա այնպես, վոր ՄԱ կողմը համընկնի CD-ին և MB կողմով անցկացնենք MK ուղիղը: Այն ժամանակ MK \perp CD:

Ճիշտ այնպես են վարվում, յերբ հարկավոր ե լինում ուղիղն անցկացնել այնպես, վոր ուղղահայաց լինի աված CD ուղիղին նրա վորեն (O₁) կամ նրանից դուրս (O₂) կետում: CD Բւղդի վրա դնում ենք քանոնը, որա վրա ել յեռանկյունին այնպես,



Նկ. 65

վոր նրա ՄԱ կողմը համընկնի քանոնի կողի նետ. Եթ ՄԱ կումով շարժում ենք քանոնի ուղղությամբ այնքան, մինչև պծագրական յեռանկյան մյուս կողմը՝ MB-ն համնի O₁ կամ O₂ կետին (նկար 65): MB-ի կողքով ուղիղ տանիլով, կստանանք մեր վորոնած ուղղահայացը:



Նկ. 66

7. Ցեղեն MB ճառագայթը (նկ. 66, 1) $\frac{1}{4}$ -ից ուակաս պտույտ ե արեւ այդ դեպքում ստանում ենք մի անկյուն, վոր փաքք և ուղիղ անկյունից:

Անդիմից փաքք անկյանը կոչվամ ե ուղիղ:

Յեթև ՄԵ ճառագոյթը կստաբել եւ $\frac{1}{4}$ -ից ավելի ւայց $\frac{1}{2}$ -ից
տակաս պտույտ (**նկ. 66. 3**), այդ դեպքում կստանանք մի ան-
կյուն, փոքր մեծ եւ ուղիղէց և փոքր՝ բաշվածքից:

Այն անկյունը, վորք մեծ եւ ուղիղից, բայց վորք եւ բացփածից,
կոչվում եւ բուր:

Նարքեր յիշ վարժություններ.

1. հ՞ոչ անկյուն կկազմեն ժամացույցի սլաքները ժամի 2-ին, 3-ին,
5-ին, 6-ին:

2. Գծնագրեց մի ուղիղ և նշեց յերկու կետ նրա վրա Սյդ կետելով
անցկացրեք ուղիղներ, վորոնք ուղղանայաց լինեն տված ուղիղներ:

3. Գծարեց ուղիղ և նրա տարբեր կողմերում նշեց յերկու կետ
Ա/Դ կետերով անցկացրեք ուղիղներ, վորոնք ուղղանայաց լինեն տված ուղիղներ:
4. Գծարեց շրջանագիծ և նրա վորեւ կետից անցկացրեք յերկու իրար փոխա-
դարձաբար ուղղանայաց լարեր կենտրոնից անցկացրեք շառավիղներ, վորոնք
ուղղանայաց լինեն առաջ լարեր:

5. Գծարեց շրջանագիծ և նրա վորեւ կետից անցկացրեք իրար փո-
խադարձաբար ուղղանայաց լարեր կենտրոնից անցկացրեք շառավիղներ, վորոնք
ուղղանայաց լինեն առաջ լարեր:

6. Տված շրջանագիծ միջ անցկացրեք **ԱԲ** լարը: **Բ** լարի ծայրեց անց-
կացրեք դրան ուղղանայաց **BC** լարը, **BC** լարի **C** ծայրից անցկացրեք ուղղա-
նայաց **CD** լարը և փերչապես **CD** լարի **D** ծայրից անցկացրեք մի լար, վոր-
ուղղանայաց և **CD**-ին Յեթի գծադրբեր խնամքով եւ կատարված, առաջ վերջին
լարը պիտք եւ անցնի **A** կետով: Ի՞նչ պատկեր կստացվի:

§ 2 ԱՆԿՅԱՆ ԶԱՓՈՒԽԸ. ՓԹԽԱԴՐԻՉ

1. Բնդունված եւ շրջանագիծը բաժանել 360 մասի (աղեղ-
ների). Մշանագիծը $\frac{1}{360}$ -ը կոչվում եւ աղեղային աստիճան:

Յեթև շրջանագիծը բաժանման կետերը միացնենք նրա կենտ-
րոնին (**O**), ամբողջ շրջանը կբաժանվի 360 հավասար սեկտորնե-
րի: Դրանցից յուրաքանչյուրի անկյան գաղաթը կենտրոնում
է, իսկ կողմեր հանդիսանում են շառավիղները: 360 անկյուննե-
րից յուրաքանչյուրը կոչվում եւ «անկյունային աստի-
ճան»: Աստիճան բառը փոխարինում են մի փոքրիկ զերոյով,
վոր անշանակում եւ աստիճան արտահայտող թվի աջ կողմը՝ վե-
րիւում (^o), որինակ՝ $\sim 20^{\circ}$ կարգում են 20 աստիճան աղեղ կամ
 $\angle 20^{\circ}$ կարգում են՝ 20 աստիճան անկյուն:

Յեթև անկյան գաղաթը գտնվում եւ շրջանագիծի կենտրոնում,
տպա անկյունը կոչվում եւ կենտրոնական, հետևապես:

Այսոն, փորբան աղեղն աղեղային տափինաներ ունի, օւսին-
քան ել համապատասխան կենտրոնական անկյունը, անկյունային
տափինաներ ունի:

Այսպիսով

շրջանագիծը պարունակում եւ աղեղային 360°

լրիվ անկյունն՝ անկյունային 360°

շրջանագիծի քառորդը՝ աղեղային 90°

ուղիղ անկյունն՝ անկյունային 90°

շրջանագիծի կեսն՝ աղեղային 180°

բացված անկյունն՝ անկյունային 180°

2. Աղեղային (անկյունային) 1° բաժանվում եւ 60 հավասար
մասերի՝ 60 աղեղային (անկյունային) բոլեների: «Բոլե» բառն
արտահայտում են մի փոքրիկ գծով, վորը գրկում եւ բոլեներ
ցույց տվող թվի աջ կողմը, վերևում ('): Որինակ՝ $14^{\circ}15'$, վորը
կարդում են այսպես՝ 14 աստիճան 15 բոլե:

Աղեղային (անկյունային) 1° -ն իր հերթին բաժանվում եւ
60 հավասար մասի՝ 60 աղեղային (անկյունային) վայրկյանների:

«Վայրկյան» բառը արտահայտ-

վում եւ յերկու փոքրիկ գծերով,

վայրկյաններ ցույց տվող թվի


աջ կողմը, վերևում ('): Որինակ՝

$23^{\circ}21'34''$ ՝ կարգում են՝ 23 աս-

տիճան 21 բոլե 34 վայրկյան:

3. $67^{\circ}17'$ նկարում տեսնում

ենք **AOB** անկյունը, բաժանված



նկ. 67

10 աստիճանի: Օ կետն ընդունված եւ իրեւ կենտրոն, և անց-
կացրած եւ յերկու համակենարսն շրջանագիծը, վորոնք հատում
են անկյան կողմերը: **AB** և **A₁B₁** աղեղներից ամեն մեկը պարու-
նակում եւ աղեղային 10° , բայց **OB** շառավիղն ունեցող շրջանա-
գիծը 1° աղեղը մեծ եւ **OB₁** շառավիղն ունեցող շրջանագիծը 1° աղե-
ղից: Այսպիսով տարբեր շրջանագիծերի տարբեր յերկարության
աղեղները ($\sim AB > \sim A_1B_1$), վորոնք համապատասխանում են
միևնույն անկյան, պարունակում են հավասար թվով աստիճան-

ներ, (ըստիներ և վայրկյաններ), բայց քանի ավելի մեծ եւ շըրս ջանապահի շառավիղը, այնքան ավելի յէ 1 աստիճան աղեղնի յիշիկարությունը:


Աղեղային աստիճանի մեծությունը կախված է շառավիղի յիշիկարությունը:

Եթե աղեղային աստիճանը կախված է շառավիղի յիշիկարությունից, ապա անկյունային աստիճանը կախված չ' շրջանագծի շառավիղի յիշիկարությունից: Այստեղից յնզրակացնում ենք, վոր անկյան մեծությունը կախում չունի նրա կողմերի յէր կարությունից:

4. Միաժամանակ տեսնում ենք, վոր աղեղային աստիճանների (բողների և վայրկյանների) թիվը համասար է կենորունական անկյան անկյունային աստիճանների (բողների և վայրկյանների) թվին: Ռւստի տառմ ենք, վոր կենորունական անկյունը չափվում են նրան համապատասխանող աղեղով:


Այդ համարությունը վերաբերում է բոլոր անկյուններին, վորովհետև ամեն մի անկյուն մենք կարող ենք դիտել իրեն կենորունական:

Ռդավումնն այն անկյան և աղեղի ունեցած կախումից վորագիր ի աղեղի չունություն կամաց այլ բաժանումներն անց են կայսեր կիսաշրջանի վրա թիվը մեկ և թիվը մերժական անկյան ամամար այլ բաժանումներն անց են կայսեր կիսաշրջանի վրա թիվը մեկ և թիվը մյուս ուղղությամբ: Կիսաշրջանը սուլորսարք վերջանում է մասշտաբային քանոնով, բաժանված սանախմետրերի և միլիմետրերի: Քանոնի մէ կողմի անցնում է կիսաշրջանի արամագծով: Կիսաշրջանի վրա կամ մի նշան, վոր համեմնկում եւ շրջանի կենտրոնի հետ Քանոնը և կիսաշրջանը մի ամբողջություն են կազմում:




Նկ. 68

5. Անկյունների չափումը փոխադրիչի միջոցով Տված ե ԱՕԲ, ԸՕԾ և ԵՕՖ անկյունները (նկ. 69 և 70): Դրանց մեծությունը չափելու համար, փոխադրիչը ԱՕԲ անկյան վրա դնենք այնպես, վոր փոխադրիչի Օ կենտրոնը համատեղվի: Օ անկյան գաղաթի և փոխադրիչի արամագիծը, անկյան մի կողմի, որինակ՝ ՕԱ-ի հետ: Առաջին գեպօւմ աղեղը 30° և յերկրորդ



Նկ. 69



Նկ. 70

գեպօւմ 40° և յերրորդ գեպօւմ 50° : Հետևապես $\angle OAB = 30^\circ$, $\angle COD = 40^\circ$ և $\angle EOF = 50^\circ$: Յերբեմն փոխադրիչի վրա լինում են նաև կիսաստիճան բաժանումներ, աստիճանի քառորդները վորոշվում են աչքաչափով:

Հարցեր յով վարդություններ:

1. Ի՞նչն է կոչվում աղեղային աստիճան:
2. Ի՞նչն է կոչվում անկյունային աստիճան:
3. Վեր անկյունն է կոչվում կենտրոնական:

4. Ի՞նչպես է կոչվում ուղիղ անկյան $\frac{1}{90}$ մասը:
5. Կփոխվի՞ արդյոք անկյան մեծությունը, յեթե նրա կողմերը յերկարացնենք:
6. Ի՞նչ մեծության աղեղ կգծի ժամացույցի ոլաքի ծայրը և ժամում 5 ժամում:

7. Ի՞նչ է փոխադրիչը:
8. Գծեցեք սուբ և բութ անկյուն և չափեցեք փոխադրիչի միջոցով:

§ 3. ԱՆԿՅԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ. ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՂԴԱՏՈՒՄԸ

Խնդիր 1. Կառուցենք 35° անկյուն:

Լուծում — 35° անկյուն կառուցելու համար վարպետ ենք այսպիսուն. զծում ենք վորեւե ուղղիղ ասենք MN (նկ. 71) և նրա վրա ել նշում վորեւե էնտ, ասենք A . Դրանից հետո MN ուղղիղ վրա դնում ենք վոխադրիչն այնպէս, վոր նրա կենտրոնը (O) համատեղի Ա կետի և արամագիծը՝ MN ուղղիղ հետո Փոխադրիչի այն տեղում, վորտեղ 35° և գրված, նշան ենք անում թղթի վրա —

K_1 , կամ K_2 . ապա արդ կետերով անց ենք կացնում BA , կամ AB^2 ուղղիները և ստանում մեզ անհայտ անկյունները — $\angle NAB_1 = 35^{\circ}$ կամ $\angle MAB_2 = 35^{\circ}$:

2. Խնդիր 2. Տված են ABC և DEF անկյունները (նկ. 72). Դրանցից վերն են ավելի մեծ:

Լուծում Դրանցից ամեն մեջ չափենք փոխադրիչով.


Կտանենք, վոր $\angle MBC = 34^{\circ}$, $\angle DEF = 58^{\circ}$: Հետևապես՝ $\angle DEF > \angle ABC$ -ից:

3. Խնդիր 3. Տված են ABC

անկյունը (նկ. 73), կառոււցիք զրան հավասար մի անկյուն:


Լուծում — Փոխադրիչով չտիենք $\angle ABC$ -ն (40°) և հետո փոխադրիչը տեղափոխենք վորեւե ուղղիղ, ասենք՝ MN -ի վրա և նրա մի կետից, բնդունենք թե B_1 -ից, կառուցենք 40° անկյուն: Ստանում ենք $\angle A_1B_1C_1$ -ը՝ հավասար տված $\angle ABC$ -ին:

4. Առաջին յերկու խնդիրները կարելի յեւ լուծել և առանց փոխադրիչի ողնության, միայն կարենով և քանոնով: Ասենք թե տված են ABC և DEF անկյունները (նկ. 74): AB և ED հավասար շառավիղներով դժենք յերկու զըջանագիծ, մեկը B կենտրոնով, իսկ մյուսը՝ E կենտրոնով: AC և DF աղեղները փոխա-




նկ. 71

րինում են փոխադրիչի աղեղներին: Կարենով չափելով DE և ապա փորությունը A կենտրոնից, DEF -ին հավասար շառավիղով դժում ենք աղեղ: Այստեղ կարող են յերեան գալ Յ դեպքեր: ա) այդ աղեղը AC -ին հատում ե Ծ կետում, այն ժամանակ $\sim DE = \sim AC$ և անկյուններն ել հավասար են: բ) Այդ աղեղը AC -ին հատում ե K_2 ($\angle ABC$ -ի ներսում) կետում, այն ժամանակ $\sim DF < \sim AC$ -ից և $\angle DEF < \angle ABC$: գ) Այդ աղեղը հատում է AC -ին K_3 կետում, ABC անկյունից դուրս, այն ժամանակ $\sim DF > \sim AC$ և $\angle DEF > \angle ABC$.



նկ. 72




նկ. 73

Այդ ձևով ել կարելի յեւ տված անկյանը հավասար անկյուն կառուցել, չդիմելով նրա չափման:

Ասենք թե պետք ե կառուցել մի անկյուն, վորը հավասար ե տված ABC անկյան (նկ. 75): Գծեք վորեւե ուղիղ — MN -ը և նրա վրա ել նշենք մի կետ — B_1 : B և B_1 կենտրոններից հավասար շառավիղներով գծենք յերկու շրջանագիծ: առաջինը տված անկյան կողմերը հատում ե A և C կետերում, յերկորդը MN կողմը հատում ե A_1 , կետում: AC հեռավորությունը կարենով չափելով, գծում ենք յերկու աղեղ միևնույն AC շառավիղով,

մեկը A , իսկ մյուսը A_1 կենտրոնով՝ Առաջին աղեղը հատում է A , աղեղին C կետում, մյուսը A, C_1 աղեղին՝ C_1 կետում: B_1 -ից անցկացնելով B_1C_1 ուղղը, սահանում ենք $\angle A_1B_1C_1$, վորը հայտապես $\angle ABC$ -ին: AC և A_1C_1 համապատասխանում են փոխադրիչի աղեղներին, և վորովհետև նրանք համասար են, ապա, ուրիշն, հավասար են նաև անկյունները, այսինքն՝

$$\angle A_1B_1C_1 = \angle ABC.$$



Նկ. 75

Հարցեր յեզ վարժություններ

1. Կառուցեք $45^\circ, 65^\circ, 80^\circ, 110^\circ, 150^\circ$ անկյուններ

2. Գծեք գորեւ անկյուն և կառուցեք մի ուրիշը, վոր հավասար լինի առաջինին:

3. Ինչպես պետք ե յերկու անկյուններ բաղդատել երար հետ 1) փոխադրիչ և 2) կարկինի միջոցով:

Տ 4. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԿՑՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

1. Խնդիր—Տված ե ABC և DEF անկյուններ (նկ. 76):

Պետք ե գտնել այդ անկյունների գումարը:


Լուծում—Չափելով այդ անկյունները փոխադրիչով, իմաստում ենք, վոր $\angle ABC=20^\circ$ և $\angle DEF=42^\circ$. Կնշանակի $\angle ABC+\angle DEF=20^\circ+42^\circ=62^\circ$:

Ապա փոխադրիչի միջոցով կառուցում են $KLM=62^\circ$ անկյունը: Այս վերջինն ել կլինի ABC և DEF անկյունների գումարը:

Կարելի յմր նախ կառուցել 20° անկյուն և հետո դրան կցել 42° անկյուն, այն ժամանակ կստանայինք միևնույն $\angle KLM=62^\circ$:


Այդ խնդիրը լուծեցինք չափելով և հաշվելով:

2. Կարկինի և քանոնի միջոցով այդ խնդիրը լուծվում ե այսպես. գծում ենք վորեւ ուղիղ, ասենք՝ OO_1 (նկ. 77) և վրա նշում մի կետ՝ L . ապա կամագոր մեծության, բայց նույն շառավիղով գծում ենք յերեք շրջանագծեր B, E և L կետերից: Ընդունելով դրանք իրեւ կենտրոններ (նկ. 76 և 77):



Նկ. 76

Շրջանագծերից մեկը հատում ե ABC անկյան կողմերը A և C կետերում, մյուսը DEF անկյան կողմերը D և F կետերում, իսկ



Նկ. 77

յերրորդը՝ OO_1 ուղիղը K կետում: AC յերկարության շառավիկով հատում ենք վերջին աղեղը մի աղեղով, վորի կենարունն ընդունում ենք K : Յերկու աղեղների հատման կետում նշանակենք N . գրանից հետո FD -ի յերկարության շառավիղով N կետից, իրեւ կենարունից, գծում ենք մի աղեղը վորը վերջին աղեղը հատում ե M կետում: Տանելով LM ուղիղը ստանում ենք անկյունների գումարը, այսինքն՝ $\angle KLM=\angle KLN+\angle NLM$ կամ $\angle KLM=\angle ABC+\angle DEF$:


Խնդիրը լուծեցինք կառուցելով:

Յերբ կարկինով ու քանոնով կատարում — վերջացնում ենք կառուցումը, ստուգելու նպատակով՝ կարելի յե փոխադրիչով չափել և հաշվել դա:

3. Խնդիր—Գտեք $\angle ABC$ և $\angle DEF$ -ի տարբերությունը (նկ. 78):

Լուծում—Փոխադրիչի միջոցով չափենք $\angle ABC$ (53°) և $\angle DEF$ (18°): հանման գործողությամբ կդանենք այդ անկյունների տարբերությունը, $53^\circ-18^\circ=35^\circ$:

Այդ խնդիրը կլուծենք համապատասխան յեղանակով: Նախ կառուցելով այնպես, վոր $\angle A_1B_1C_1 = \angle ABC$ (նկ. 79) գրանից հատո




նկ. 78

նկ. 79

B_1C_1 -ի վրա կառուց ցնք $\angle C_1B_1K(A_1B_1C_1)$ անկյան ներսում) այսպես, վոր հավասար լինել DEF անկյան: Այն ժամանակ $\angle KB_1A_1$ -ը կլինեն ABC և DEF անկյունների տարբեր յունը:

4. Խնդիր — $\angle ABC$ բազմապատկենք 3-ով (նկ. 80):

Լուծում — Բազմապատկել $\angle ABC$ ամբողջ թվով, որինակ Յովիլ, նշանակում են ABC անկյունն իրրե գումարելի կրկնել 3 անգամ, այլ խոսքով՝ գումարել իրար հաշասար յերեք անկյուններ A, B, C_3 անկյունը կլինի այն արտադրյալը, վոր մենք ուզում ենք գտնել, քանի վոր $\angle ABC \cdot 3 = \angle A_1B_1C_3$:



նկ. 80

նկ. 81

5. Խնդիր — Տված ABC անկյունը կիսեցեք, այսինքն բաժանեցեք յերկու հավասար մասի (նկ. 81):

Լուծում — Փոխադրիչի միջոցով նախ չափում ենք անկյունը (52°), դրանից հետո բաժանում ենք 2-ի և ստանում $52^\circ : 2 = 26^\circ$ և կառուցում ենք BA (կոմ BC) կողմի վրա $\angle ABD = 26^\circ$: Նաև ձևով ել կարելի յե անկյունը բաժանել 3, 4, 5 և այլ հավասար մասերի:

Կարկինի և քանոնի միջոցով անկյունը բաժանվում ե յերկու հավասար մասի, այնպես, ինչպես վարվեցինք հատվածը կիսելիս: Ամբողջ խնդիրը հանդում ե աղեղը կիսելուն:

Ընդունենք թե տված ե ABC (նկ. 82) անկյունը: Ե գագաթից, վորպես կենտրոնից, տանենք շրջանագիծ կտմավոր շառավիղով: այդ շրջանագիծը կհատի անկյան կողմերը K և L կետերում: Բաց անելով կարկինը KL լարի կիսից ավելի, K և L կենտրոնից անցկացնենք յերկու իրար հավասար շրջանագծեր, վորոնք կհատավին M և N կետերում: Այդ կետերով անցկացնենք ուղիղ գրանով աղեղը և լարը կիսած կիսենք: Աղեղի միջնակետը միացնելով B գագաթին, կստանանք մի ուղիղ, վորով ABC և հակառակը կկիավի: Այդ ուղիղը կոչ նի M և N կետերով ու B գագաթով և կոչվում ե անկյան կիսողը: Ստուգելու համար կարկինով չափում ենք $OK = OL$ ուղիղների միջև յեղան հեռավորությունը: Ցերե օկ $OK = OL$, ապա ուրեմն կառուցումը ճիշտ ե կատարված — $\angle OK = \angle OL$, հետևապես $\angle ABO = \angle CBO$:

Անկյան ամեն մի կեռը կարելի յե կիսել, այսինքն՝ ամբողջ ABC անկյունը 4 հավասար մասի բաժանել: Նույն ձևով ել կարելի յե անկյունը բաժանել 8, 16 և այլ հավասար մասերի:

Հարցեր յեկ վարժուքնեներ:


1. Գծագրեցեք յերկու անկյունն գտեք նրանց դումարը և տարբերությունը (յերկու յեղանակով):

2. Տված ե ABC սուր անկյունը, բազմապատկեցեք դա 4-ով (յերկու յեղանակով):

3. Տված շրջանը կիսեցեք, բաժանեցեք 4, 8, 16 հավասար մասերի:

4. Քանի աստիճան և ըստի յե պարունակում լրանի $\frac{1}{16}$ մասը կազմող մեկտորի կենտրոնական անկյունը:

5. Ցերկու անկյունների առարկը բայց յունը $120^\circ 20'$ յե, իսկ գումարը՝ $78^\circ 20'$, վերքան և այդ անկյուններից յուրաքանչյուրը:



նկ. 82

6. Ըստիկ անհյուսն ըաժմանաժած է յ'ըրկու այնպիսի անհյուսների, փորուցից մեկը $16^{\circ} 10'$ -ով ափելի յի մյուսից Վհրքան և այդ անկյուններից յուրաքանչյուրի մեծությունը

7. Տերկու անկյունների գումարը 180° է: Դրանցից մեկը $8,5$ անգամ մեծ ե մյուսից. գո՞րքան և այդ անկյուններից յուրաքանչյուրը:

8. Տված է 30° 40' պարունակող մի անկյունն նրա գագաթից, անկյան կողմերից մեկին անց է կացրած ուղանայաց: Վորոշեցեք ուղանաւացի և մյուս կողմի միջև յեղած անկյան մեծությունը:

9. Տված է 120⁰ անկյունն նրա գտաթով տարված են յերկու ուղիղներ, զոր նցեց մեջն ուղանայաց և անկյան մի կողմէն, մյուսն անկյան մյուս կողմէն Վարողեցեք այդ յերկու ուղղանայաց ուղիղներով կազմված անկյան մեջ ։ Եթյունը:

10. Ի՞նչն երկու անկյան կիսող:

11. Տպած և մի անկյունն 40° 50': Նըս դադարից տարված և ուղղահայաց անկյան կողմերից մեկին Վորոշեցեք այդ ուղիղով և տվյալ անկյան կիսողով կազմված անկյուններ:

§ 5. ԱԵԿՏՈՐԱՅԻՆ ԴԻԱԳՐԱՄՆԵՐ

Մենք արդեն քննության առանք սյունաձև կամ ուղղանակունք գիտաբամերը։ Այժմ անցնենք սեկտորային գիտաբամերը։

Խնդիր. — Դիտողական ձևով արտահայտեցեք 40 աշակերտական բարից բարկացած մի խմբի սոցիալական կազմը, վորը հետեւյան եւ պահպանների մուգեանդեռ 22

ա) բանվորների յերեխանների թիվը կազմում է սմբռողջ լիմիտի աշակերտության $\frac{22}{11} = 0,55$ մասը, այսինքն՝ $55\%_0$ -ը.

բ) գյուղացի յիշելսաների թիվը՝ $\frac{14}{40} = 0,35$ մասը, կամ 35% .

$$q) \text{ } \delta_{\text{шов}} = \eta \tau^{\alpha} k_B T \cdot \ln \frac{k_B T}{\theta k_B T} \cdot \frac{4}{14} = 0,10 \text{ } \delta = 10\%$$

Վերցնենք վորեե շրջան որինակ՝ 5 ամ յերկարության շառապիղով. Գոխաղրեչով բաժանենք այդ 100 հավասար սեկոորդների. Իրար հավասար 100 սեկոորդներից յուրաքանչյուրի միանկյունը $360^\circ : 100 = 3,6^\circ$ է:


Տոկոսների թվերով մի առ մի բազմապատկում ենք 3,6°-ը, վորը ցույց և տալիս 1 տոկոսը, և գտնում ենք յուրաքանչյուր հասարակական խավի յերեխաների թվի արտահայտությունը՝ շրջանի մրա, արինքն.

$$3,6^{\circ} \cdot 55 = 198$$


$$3,6^{\circ} \cdot 35 = 126$$

$$3,6^{\circ} \cdot 10 = 36^{\circ} \text{ (u. 83)}$$

Կարելի յեւ տարբեր սեկտորներն իրարից զանազանիլու համար տարբեր ձեի և ուղղության գծերով ծածկել կամ գույներով ներկել։ Այդպիսի գիտագրամը տալիս եւ պատկերավոր արտօհայտություններ տված խմբի աշակերտության սոցիալական կազմի:



VII, 83



1188

Սեկտորային գիտագրամեր գծագրելու համար ամենահարավարա մարդն ե ոգտվել այն լրջանից, վոր բաժանված ե 100 հավասար սեկտորների։ Այդպիսի լրջանը կօչվում ե տոկոս այլին շրջանու Փոխանակ տոկոսային լրջանի, կարելի յեւ գործադրել տոկոս ա ա ա ա յին փոխադրել (նկ. 84), վորի ազեղը (կիսալրջան) բաժանվում ե 50 հավասար մասերի։

Հարցեր յեվ վարժություններ

1. Քծաղբեցիք AB, CD, EF ուղղվածները և M կետը (նկ. 85): Քծաղբական յեռանկյան միջջառք M կետից ուղղահայաց ուղղվածներ տարեք առաջին յերկրորդ և յերրորդ ուղղվածներն են:

2 Յերկու անկյուններից մեկը կազմում է մուսավ 50°₀-ը: Այդ անկյուններից առարկերու թյունը 30°₀ է: Վո՞քը քանի և այդ անկյուններից յօպաբանյուրը

և վերջանց հումարը յառաջեք այդ անկյունները և նրանց գումարը
3. Կառուցիր փոքր անկյուն և փոխադրիչով և կամ կարկնով ու քանա
նով բաժանեցեք դա 4 հավասար մասի:

4. Կարկինի և քանոնի միջացով բացված անկյունը կիսեցեք:

5. Խճի 35 աշակերտներից մաթեմատիկայի դաս
սր լավ գրել եյին 14-ը, բավարար գրել եյին դարձյալ
14-ը և անբավարար՝ 7-ը: Կազմեցեք սեկտորային
դիագրամ:

6. Մի կողանաեսություն ունի 1250 հա հող,
գորից անտառ՝ 240 հա. վարելանող՝ 600 հա, մարդա-
գետին 400 հա, մասցած տարածությունն ել բանում
են շենքերը և անպետք հողերը:

Կազմեցեք դիագրամ:



Նկ. 83

VII ՅԵՌԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԲԱԶՄԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՄՆԵՐԻ ՀԱՇՎՈՒՄԸ

§ 1. ՅԵՌԱՆԿՅՈՒՆ

1. Յեռանկյուն կոչվում է հարթության այն
մասը, վոր սահմանափակված է յերեք հատվածո-
ներից բազկացած բեկյալով (նկ. 86):

AB, BC և CA հատվածները կոչվում են յեռանկյան
կողմերը, իսկ A, B և C անկյուն-
ները՝ յեռանկյան անկյուն-
ներ: Անկյունների գագաթները կոչ-
վում են նաև յեռանկյան գա-
գաթներ: Յեռանկյունն ունի 3 կողմ
և 3 անկյուն: Բնդունքած է «յեռան-
կյուն» բառը նշանակել \triangle նշանով:


Յեռանկյան կողմերից մեկը սովո-
րաբար կոչվում է յեռանկյան հիմք,
որինակ ԾԱ-ն: այդ գեպօռմ մյուս
յերկու կողմերը (AB և BC) կոչվում են յեռանկյան կողմնային
կողմեր:

2. Այն յեռանկյունը, վորի բոլոր անկյունները սուր են, ինչպես
86-րդ նկարումն ե, կոչվում է սուր յեռան-


յն յեռանկյունը, վորի անկյուններից մեկն ուղիղ ե, կոչ-
վում ե սուր անկյուն կյոււն յեռանկյուն (նկ. 87): Այն կողմերը,
վորոնք յեռանկյան մեջ ուղիղ անկյուն են կազմում, կոչվում են
եղեր (CB և CA), իսկ ուղիղ անկյան դիմաց գտնվող կողմը՝
ներք քնար ածիք:

Այն յեռանկյունը, վորի անկյուններից մեկը բռնթ ե, կոչ-
վում ե բթանկյուն (նկ. 88):

3. Ընդունված է AB կողմի յերկաբությունը նշանակել և
տառով, այնպես վոր AB=c, նույն ձեռք BC=a և CA=b-ին:




Նկ. 87



Նկ. 88

(նկ. 86): Կնշանակի ուղղանկյուն յեռանկյան մեջ (նկ. 87) եղերի
յերկաբությունը կնշանակվեն ա և b, իսկ ներքնաձիգը՝ ը տառով:

Հարկավոր են նկատել, վոր ը կողմի դիմաց գտնվում է $\angle C$ -ն, ա կողմի դիմաց՝ $\angle A$ -ն և բ կողմի դիմաց՝ $\angle B$ -ն:



Նկ. 89


4. ABC յեռանկյան մեջ B գագաթ-
ից նրա հիմքին տանենք BD ուղ-
ղանդացը (նկ. 89). զա հանդիսանում
է յեռանկյան բարձրությունը:
Նույն ձեռք կարենի յերածությունը
տանել նաև A և C գագաթներից:
Յեռանկյան մեջ կարենի յերածությունը:

Ուղղանկյուն յեռանկյան մեջ եղերը
հանդիսանում են բարձրությունները (նկ. 90): BC եղեր հանդիս-
անում է CA հիմքին տարած բարձրությունը և CA եղերը BC հիմ-


քին տարած բարձրությունը: Ուզիղ անկյան գագաթից AB հիմքն, այսինքն ներքնաձիգին, տարվում ե յերրորդ բարձրությունը՝ CD -ն:

Բթանկյուն յեռանկյան մեջ A գագաթից բարձրություն կարելի յե տանել, իջեցնելով ուղղահայաց BC հիմքի շարունակության միայն: Ճիշտ նույնպես կարելի յե բարձրություն էնեցնել B գագաթից AC կողմի շարունակության վրա: Յերրորդ բարձրությունը կարելի յե անցկացնել C գագաթից, անմիջապես AB կողմին տանելով ուղղահայաց ուղիղ:

Հարկավոր ե ուշադրություն դարձնել այն բանի վրա, վոր բոլոր յերեք բարձրություններն ել հատվում են մի կետում:



Նկ. 90



Նկ. 91

Սուբանկյուն յեռանկյան մեջ (նկ. 89) բարձրությունների հատման կետը գտնվում ե յեռանկյան ներսում (\bigcirc կետ): Ուղղանկյուն յեռանկյան մեջ այդ կետը համընկնում ե ուզիղ անկյան C գագաթի հետ (նկ. 90), իսկ բթանկյուն յեռանկյան բարձրությունների հատման կետն ընկնում ե յեռանկյունուց դուրս (նկ. 91):

Հարցեր յեվ վարժարյաններ

1. Ի՞նչն ե կոչվում յեռանկյուն:
2. Քանի՞ կողմ ունի յեռանկյունը:
3. Վոր յեռանկյունն ե կոչվում ուղղանկյուն, բթանկյուն:
4. Ի՞նչպես են կոչվում ուղղանկյուն, յեռանկյան կողմերը:
5. Ի՞նչն ե կոչվում յեռանկյան բարձրություն:
6. Յեռանկյան մեջ քանի՞ բարձրություն կարելի յե անցկացնել:

7. Դառնուցեք բթանկյուն յեռանկյուն և անցկացրեք նրա յերեք բարձրությունները: Շարունակցեք բարձրությունները մինչև իրար փոխադարձաբար հատելը:


§ 2. ՅԵՌԱՆԿՅՈՒՆ ՅԵՎ ԲԱԶՄԱՆԿՅՈՒՆ ՍՍԿԵՐԵԾԸ

1. 92-րդ նկարում տված ե $ABCD$ ուղղանկյունը և $A_1B_1C_1D_1$ քառակուսին: Թե մեկի և թե մյուսի մեջ անց ե կացրած ուղղով վորը միացնում ե յերկու հակագիր անկյունների գագաթները — AC և A_1C_1 : Այդ ուղիղները կոչվում են անկյունագծեր:

Յեթե թղթից պատրաստենք ուղղանկյուն (կամ քառակուսի) և կտրենք անկյունագծով, կստանանք յերկու հավասար յեռանկյուններ, վորունք իրար վրա դնելիս կհամընկնեն:

Անկյունագիծը յերկու հավասար յեռանկյուններ և բաժանում ուղղանկյունը (կամ քառակուսին):

Նկ. 92




Հետևապես:

$$\triangle ABC\text{-ի } \text{մակերեսը} = \triangle A_1B_1C_1\text{-ի } \text{մակերեսին} = \square \frac{ABCD\text{-ի}}{2}$$

մակերեսին:

2. 93-րդ նկարում տեսնում ենք 6 ուղղանկյուն յեռանկյուններ: Այդ բոլոր յեռանկյուններն ել լրացված են և վերածված են:




Նկ. 93.

առղանկյունների, վորոնցից յուրաքանչյուրը կազմված է յերկու հավասար յեռանկյուններից: Յեթե ուղղանկյան մակերեսը հավասար ե ձ. թիւն, ուրեմն ուղղանկյուն յեռանկյան մակերեսը կլինի:

$\frac{1}{2} ab$, այսինքն՝ հիմքի և բարձրության (կամ եչերի) տրամդրյալն է լուսին:

$$S\Delta = \frac{1}{2} ab$$

3. 94-րդ նկարում բերդած են յերեք սուրանկյուն յեռանայուններ, վորոնցից յուրաքանչյուրի մեջ անց ե կացըած միմի բարձրություն: Դրանով յեռանկյունը բաժանվում է յերկու ուղղանակյուն յեռանկյան վորոնք լրացվել են և վերածվել ուղղանկյունների: Այդ ուղղանկյ ու յեռանկյուններից մեկի մակերեսը հավա-




Նկ. 94

սար և մի ուղղանկյան մակերեսի կխսին, մյուսը՝ մյուս ուղղանկյան մակերեսի կխսին: Յեռանկյան մակերեսը կազմում է յեռանկյան հիմքին և բարձրության հավասար հիմք և բարձրություն ունեցող ուղղանկյան մակերեսի կեսը: Այսպիսով յեռանկյան մակերեսը հավասար է իր միմի յեվ բարձրության տրամդրյալի կիսին:

$$S\Delta = \frac{1}{2} ab$$

4. Վերջապես գերցնենք ABC բթանկյունը յեռանկյունը (նկ. 95), տանենք նրա բարձրությունը՝ AB, ABD յեռանկյունը ուղղանկյուն է, ACD յեռանկյունը՝ նույնպես ուղղանկյուն է: Յեթե ABD յեռանկյան մակերեսից հանենք ACD յեռանկյան մակերեսը, այն ժամանակ կհնա ABC յեռանկյան մակերեսը:

$$S_{ABC} = S_{ABD} - S_{ACD}$$



Նկ. 95

Բայց ABD յեռանկյան մակերեսը հավասար է AFBD ուղղանկյան մակերեսի կխսին և ACD յեռանկյան մակերեսը՝ AECD ուղղանկյան մակերեսի կխսին, նշանակում ե ABC յեռանկյան մակերեսը հավասար է AFBD և AECD ուղղանկյունների մակերեսների կխսատարելությանը, ուրիշ խոսքով, ACEF ուղղանկյան մակերեսի կխսին: Այս բանը գրենք այսպիս:

$$S_{ABD} = \frac{1}{2} S_{AFBD}$$

$$S_{ACD} = \frac{1}{2} S_{AECD}$$

$$S_{ABD} - S_{ACD} = \frac{1}{2} (S_{AFBD} - S_{AECD})$$

Համար

$$S_{ABC} = \frac{1}{2} S_{BCEF} = \frac{1}{2} ab,$$

Այս բոլոր դիպերում ել յեռանկյան մակերեսը հավասար է իր հիմքի յեվ բարձրության արագրյալին:

$$S\Delta = \frac{1}{2} a \cdot b$$

քառ. միավորների:

5. Ամեն մի բազմանկյուն, որինակ՝ ABCDEF-ը կարելի յեանկյունագծերով բաժանել յեռանկյունների, ինչպես ցույց ե տրված 96-րդ նկարում: Հետևապես, չափելով անկյունագծերը և յեռանկյունների համապատասխան բարձրությունները, կարող ենք հաշվել բոլոր յեռանկյունների մակերեսները, և գումարելով այդ բոլորը, գտնել բազմանկյան մակերեսը:

Հարցեր յեվ վարժույթներ:

1. Ինչի՞ յե հավասար յեռանկյան մակերեսը:


2. Մի հողամաս ունի ABCD քառանկյան ձևը (նկ. 97), կորի B և D անկյունները հավասար են: Նրա կողմերից AB=560 մ, BC=330 մ, CD=160 մ և AD=630 մ չափեցնելով այդ հողամասի մակերեսը:

3. Գծագրեցնեք մի յեռանկյուն և չափեցնեք նրա կողմերը. Գծեցնեք բարձրությունը, չափեցնեք և տպա գտեք յեռանկյան մակերեսը, հաջորդաբար հիմք

Ենդունելով կողմեցից մեկը, ևսառ յմրիմորքը, յլրպորգը հաշվումներէց ևսառ համատեղերը արդյունքները:

4. Գտեք 3,5 և հիմք 4 3,5 մ բարձրություն ունեցող յեռանկյան մակերսը:

5. Յեռանկյան մակերսը 16,5 քառակուսի մետր եւ նրա բարձրությունը 4,4 մետր եւ Գտեք այդ յեռանկյան հիմքը:



Նկ. 96



Նկ. 97

6. Յեռանկյունը և քառակուսին հավասարամեծ են (այսինքն՝ նրանց մակերսները հավասար են): Պառակուսու կողմը 4,8 մետր եւ, իսկ յեռանկյան բությունը՝ 6,4 մետր: Գտեք յեռանկյան տվյալ կողմը համապատասխանող բարձրությունը:

VIII. ՈՒՂԻՂ ՊՐԻԶՄԱՅԻ ՍԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ ՅԵՎ ԾԱՎԱԼԸ

§ 1. ՈՒՂԻՂ ՅԵՌԱՆԿՑՈՒԽ ՊՐԻԶՄԱՅԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ

98-ըդ նկարում տեսնում ենք ուղղանկյուն զուգահեռանիստ կամ չորսու, վորի կողմանային նիստերն ուղղանկյուններ են, իսկ ճիմքերը $A_1B_1C_1D_1$ և $A_2B_2C_2D_2$ հաղասար ուղղանկյուններ:

Անցկացնենք հիմքերի D_1B_1 և D_2B_2 անկյունաղծերը և պատշաճացնենք, վոր նկարում ցույց տված սեացրած հարթությամբ զուգահեռանիստը կիսված է, կիսված մասերը կոչվում են ուղիղ և զուգահեռանիստի կեսը: Այդ յերկու պրիզմաների հիմքերը նիստերը ուղղանկյուններ, իսկ կողմանային նիստերը՝ ուղղանկյուններ են:

Կողմանային նիստերի (ուղղանկյունների, մակերեսների դուրս մարը կոչվում է պրիզմայի կողմնային մակերեսը) յթ

յթե զրան աղեղացնենք յերկու հիմքերի մակերեսները կատանանք պրիզմայի մակերեսը յթ լին մակերեսը յթը:

Զուգահեռանիստի յերեք չափումները նշանակելով առ եւ իսկ անկյունաղիծը՝ գտառով, յեռանկյուն պրիզմայի կողմնային մակերեսը յթը կարտահայտենք այսպես:

$$ac + bc + dc = (a + b + d)c = P \cdot h$$


վորուել Պ-ն պրիզմայի հիմքի պարագիծն եւ, իւ և Հ-ը՝ պրիզմայի բարձրությունը:

Յեռանկյուն պրիզմայի լրիդ մակերեսը յթը համապատ է $(a+b+d)c + ab$:

Ուղիղ յեռանկյուն պրիզմայի հիմքը կարող եւ ամեն տեսակ յեռանկյուն լինել և վոչ թե միայն ուղղանկյուն յեռանկյունն նրա մակերեսը յթը հաշվում եւ այնպես: Ինչպես տեսանք նախորդ գեղքում:

Ուղիղ պրիզմայի հիմքը կարող եւ լինել ամեն մի քառանկյուն կամ առհասարակ բազմանկյուն: Այսպիսուն:

Ուղիղ պրիզմայի կողմեջին մակերեսույթը համապատ է պրիզմայի իւ լինի պարագիծի բարձրության արտադրյանին:



Նկ. 98

§ 2. ՅԵՌԱՆԿՑՈՒԽ ՈՒՂԻՂ ՊՐԻԶՄԱՅԻ ԾԱՎԱԼԸ

Ուղղանկյուն զուգահեռանիստի ծավալը, վոր նշանակվում է V տառապի հավասար է $a \cdot b \cdot c$, վորանու ա, եւ ս-ն զուգահեռանիստի յերեք չափումներն են, ուղիղ կերպ ասած՝ $V = Q \cdot h$. Q -ն զուգահեռանիստի հիմքի մակերեսն եւ, իսկ h -ը՝ բարձրությունը:

Ուղիղ յեռանկյուն պրիզման, վորի հիմքն ուղղանկյուն յեռանկյուն եւ (նկ. 99) կազմում եւ ուղղանկյուն զուգահեռանիստի ծավալի կեսը նշանակում եւ, ծավալը՝


$$V = \frac{1}{2}abc = \left(\frac{1}{2}ab \right) \cdot h$$

այսինքն՝


Յեռանկյուն պրիզմայի ծավալը, վորի հիմքն ուղղանկյուն յեռանկյուն եւ (այսի եղերով) յեվ բարձրությունը եւ, համապատ եւ նիմի մակերեսի $\left(\frac{1}{2}ab \right)$ յեվ բարձրության (ի) արտադրյանին:

Այսպիսակ, պրիզմայի ծավալը հաշվելու համար հարկավոր է նախ հաշվել նրա հիմքի մակերեսը և ստացած թիվը բաղմապատկել բարձրությամբ:

Քննության առնենք այն յեռանկյուն պրիզման, վորին հիմքեր հանդիսանում են ուղած յեռանկյուններ (*նկ. 100*): Ամեն մի յեռանկյան մեծ անկյան գագաթից տանենք C_1D_1 և C_2D_2 բարձրությունները և ուղիղով միացնենք D_1 և D_2 կետերը: Այդ գործում տվյալ պրիզման $C_1D_1D_2C_2$ ուղղանկյան հարթությամբ



նկ. 99



նկ. 100

Կրածանվի յերկու յեռանկյուն պրիզմաների, վորոնց հիմքերը ուղղանկյուն յեռանկյուն են: Առաջին պրիզմայի ծավալը կլին:

$$V_1 = Q_1 \cdot h,$$

յերկրորդ պրիզմայի ծավալը կլին:

$$V_2 = Q$$

Կնշանակի, ամբողջ պրիզմայի ծավալն հետևյալն է:

$$V = V_1 + V_2 = Q_1 h + Q_2 h = (Q_1 + Q_2) \cdot h$$

$Q_1 + Q_2$ ՝ $A_1B_1C_1$ յեռանկյան մակերեսն է. Կնշանակենք դա Q -ով, հետևապես՝

$$V = Q \cdot h$$

Խոր. միավորների.

այսինքն՝

Վորեվի ուղիղ յեռանկյուն պրիզմայի ծավալը հավասար է նրա հիմքի մակերեսի յել բարձրության արտադրյալին:

ՄԱՆՈՅԻ. ... Բոլոր այն հատվածները, վորոնց միջնցով վորությունը էնծավալ մակերես, պետք է չափված լինեն մշտակառ միավորով, այն ժամանակ մակերեսույթը (մակերեսը) կարտահայտվի նույնանուն քառակուսը, իսկ ժամանակը խորանարդ միավորներով:

§. 3. ԲԱՐՁՐԱԿԱՑՈՒԻՆ ՈՒՂԻՂ ՊՐԻԶՄԱՅԻ ԾԱՎԱԼԻ


Տված ե վորկե բարձրանկյուն ուղեղ պրիզմա, որինակ՝ վեցանկյուն (*նկ. 101*):

Հիմքի (բարձրանկյուն) մի գագաթից տանենք անկյունագծեր, վորոնք վեցանկյունը կվերածին չորս յեռանկյունների: Նույնը կանենք մյուս հիմքի նկատմամբ և վեցանկյուն պրիզման կվերածին չորս յեռանկյուն պրիզմաների:


Պրիզմաների ծավալները նշանակենք V_1 , V_2 , V_3 և V_4 , հիմքերի մակերեսները՝ Q_1 , Q_2 , Q_3 , Q_4 -ով, իսկ բարձրությունը՝ H -ով:

Այն ժամանակ ամբողջ պրիզմայի ծավալը կլին:

$$V = V_1 + V_2 + V_3 + V_4 = Q_1 H + Q_2 H + Q_3 H + Q_4 H = (Q_1 + Q_2 + Q_3 + Q_4) H$$



նկ. 101




նկ. 102

Վեցանկյան հիմքի մակերեսը նշանակելով Q -ով, կստանանք:

$$V = QH \quad (\text{Խոր. միավորներ})$$

Այսինքն՝

Վորեվի պրիզմայի ծավալը հավասար է նրա հիմքի մակերեսի յել բարձրության արտադրյալին:



Հարգելը յեկ վարժություննեղ.

1. Գծագրեցեք ուղղված յնանդկյուն պրզմայի կողմանային մակերեսութիւնը փոփածը հետևյալ ալյազներով, պրզմայի երկբնը լինեն ուղղանկյուն յիւնանդկյունները 3 ու 4 և ու եցիւրով ու 5 ու ներքինաձիգով, բարձրութիւննո՞ւ Ա = 6 ու 9

Հ իշանակիս պետք և հաշվել ուզիղ պըրիզմացի կողմանցին մակերեռութը և ծավալը:

3. Թթվեղաւ տանկըքի յերկու կողմի թեքվածքներն իբար նկատմամբ ուշ պահպառն են կազմում (նկ. 102): Դրանցից յուրաքանչյուրի լայնությունը՝ 3 մ, իսկ յերկարությունը՝ 12 մ եւ Վորքան և այդ թեքվածքների առկ յեղած ժայռությունը:

Յուցմունք — Տանիքի տակի մասը ուղիղ յառանկյուն պրիզմայի ձև
ունի, գործ բարձրությունը 12 մ, իսկ էիծքն ուղղանկյուն յառանկյուն ե 3 մ և
3 մ հինգուած:

IX. ՀՐՁԱՆԱԳԾԻ ՅԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀՐՁԱՆԱԳԾԻ ՄԱԿԵՐԵՍԸ

§ 1. ՇՐՋԱՆԱԳԾԻ ՑԵՐԿՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Այսպես, ինչպես հատվածի յերկարությունը չափեցինք, չեղարելի շրջանագծի յերկարությունը չափել քանի վոր շրջանագիծը կու գիծ և և չունի վոչ մի ուղիղ հատված։ Սակայն յեթե շրջանագիծը լիներ թելից, ապա կտրելով և ուղղելով դա, կկառողանայինք չափել նրա յերկարությունը։

Ծրջանագծի յերկարությունը չափելու համար վարվում են այսպես. վերցնում են տարբեր տրամադրով մի քանի փայտե գլաններ, վորոնցից յուրաքանչյուրի շուրջը սեղմ փաթաթելով թղթե ժապավեններն այսպիս, վոր ծայրերն իրար առնեն, հենց այսեղ ծակում են գնդասեղով: Գնդասեղը ժապավենը ծակում ե յերկու տեղից (յերկու ծայրերից): Եթե ժապավեններն ուղղ զենք, ապա գնդասեղի արած անցքերի հեռավորությամբ կվորոշվի ըրջանագծի յերկարությունը:

Այդ ձեռով չափենք բոլոր գլանների շրջանագծերը, ապա նրանց տրամադրերը:

Հաշվելով, թե ըրջանակծի յերկարությունը քանի անգամ
մեծ և իր տրամադրից, բոլոր դեպքերում ել նույն թիվը կատա-
նանք՝ մոտավորապես 3,14։ Այդ նշանակում են, վոր չը չանա-
գծի յերկարությունն իր տրամագծից մեծ է 3, 14
անգամ։

Յեթև շրջանագծի յերկտրությունը նշանակենք Ծ, իսկ տրամադրվածը՝ D տառով, կստանանք հետևյալ բանաձևը՝

$$C = 3.14 D$$

Այդ բանաձևից հետևում է, որ

$$D = \frac{C}{3.14}$$

Այս վերջին բանաձևը կարելի յէ այսպես պըել.

$$D = C \cdot \frac{1}{3.14}$$

Յեթի բաժանենք 1-ը 3,14 վրա, կստանանք մոտավորապես 0,318 կամ 0,32. կնշանակի

D=0,32 C

Որինակ 1. — Տակառի հիմքի տրամադրծը 0,60 մետր և
Գտեք դրա շրջանագծի յերկարությունը:

$$C = 3,14 \cdot 0,69 = 1,9$$

Որինակ 2. — Ծառի բնի զրջանապիճը 150 սանտիմետր եւ գտնելու ժամանակին:

$$D = 0,32 \cdot 150 = 47 \text{ mm}$$


Հարցեր յեպ վարժություններ

- Վո՞րքան և այն զբանագիծի յերկարությունը, վորի արամագիծն է ՏԵ
 - Խճանչես կարելի յի շրջանագիծի տրամագիծը, շառավիղը դժուել, յերբ հայանի յի նրա յերկարությունը
 - Ծրջանագիծի (Ը) յերկարությունը 28,6 մմ եւ Գտեք նրա 50° աղեղի յերկարությունը:
 - Տրված են յերկու համակենտրոն շրջանագիծեր, վորոնցից մեկի տրամագիծը (D_1) հավասար է 15 մմ, իսկ մյուսի տրամագիծը (D_2) 25 մմ Պորոշից այդ շրջանագիծերից յուրաքանչյուրի 10° պարունակող աղեղի յերկարությունը:
 - Մի կիլոմետր անցնելով քանի՛ պտույտ և կատարում հեծանիվի անհիվը, վորի տրամագիծը 750 միլիմետր եւ
 - Եերկրի հասարակածի յերկարությունը ընդունելով 40,000 կիլոմետր հայավեր յերկրի տրամագիծը՝

7. Կրկեսի մըցալուածի արամակիծը 15 մետր է: Գտեք մըցալուածի շըջաւագիծը:

§ 2. ՇՐՋԱՆԻ ՄԱԿԵՐԵՍԸ

Գծենք մի շըջան (նկ. 103) և փոխադարձաբար ուղղահայց յերկու արամագծերով բաժանենք 4 հավասար սեկտորների: Դրանից հետո ամեն մի սեկտորը բաժանենք 4 հավասար մասի: Այսպիսով՝ շըջանը բաժանված է 16 հավասար սեկտորների: Պատրաստենք շըջան վերևի բաժանութերով և կտրասելով վերածենք սեկտորների, մեկ ուրիշն ել կտրենք և դասավորենք այնպես, ինչպես ցույց ե արգած 103-րդ նկարում: Ստացվում է մի պատկեր, վոր շատ նման և ուղղանկյան: Այդ ուղղանկյան հիմքը հաս-



նկ. 103

վասար և շըջանագծի յերկարության կիսին, իսկ բարձրությունը՝ շառավիղին կամ արամագծի կիսին: Եթե շըջանը բաժանենք 32 հավասար սեկտորների և դասավորենք այնպես, ինչպես 103 ա նկարն ե ցույց տալիս, ապա դարձյալ կտանանք մի պատկեր, վորն ավելի ևս մոտ ե ուղղանկյանը: Ուստի շըջանի մակերեսը համարվում է հավասար այս ուղղանկյան մակերեսի, վորի հիմքը կիսաշրջանագիծն է ($\frac{C}{2}$), իսկ բարձրությունը՝ շառավիղը ($\frac{D}{2}$): Շըջանի մակերեսը նշանակելով K ատառվ, կտանանք:

$$K = \frac{C}{2} \cdot \frac{D}{2} = \frac{C \cdot D}{4} = \frac{1}{4} C \cdot D,$$

բայց՝

$C = 3,14 D$.

ուրեմն՝

$$K = \frac{3,14 D^2}{4} = 0,785 D^2 \text{ (քառ. միավորի):}$$

Բայց

$$R = \frac{D}{2},$$

ուստի

$$K = \frac{C}{2} \cdot \frac{D}{2} = 3,14 \cdot R \cdot R = 3,14 R^2 \text{ (քառ. միավորի):}$$


այսինքն՝

Շրջանագծի մակերեսը հավասար է շրջանագծի $\frac{1}{4}$ յերեսու-

րյանք բազմապատկած տրամագծով, կամ շրջանի մակերեսը հավասար է օպուտիվի քառականուն, բազմապատկած 3,14-ով:

Հարցեր յել վարժություններ:

1. Ինչի՞ յել հավասար շըջանի մակերեսը?
2. Շրջանի մակերեսը՝ $K = 240$ քառ. սանտիմետրի: Վճռուն և որթանի անկառությունը, գործ աղեղը 60° է:
3. Գլանաձև յերկաթիւ տրամադրել չէ մմ եւ գտեք նրա ըստ լայնություն կարգածքի մակերեսը:
4. Մի շըջանը AB արամագիծը 10 սանտիմետր և ներսում շառավիղների վրա արամագծի զանազան կողմերում կառուցված նն կիսաշրջանագիծը (նկ. 104): Վորոշեցնեք սկայըրած պատկերի արամագիծը և նրա մակերեսը:
5. Առողվակի ներեխն արամագիծը՝ 12 մմ, իսկ արտաքին արամագիծը՝ 16 մմ: Գտեք նողովակի ըստ լայնության կարգածքի մակերեսը Գծեն նկարը:



նկ. 104

X. ԳԼԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ ՅԵՎ ՄԱՎԱԾԸ

§ 1. ԳԼԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ


Վերցնենք մի դլան (նկ. 105) և նրա մակերեսությը սեղմ կերպով պատենք թղթով: Էնտո քանոնի միջոցով գանակի սուր ծայրով կտրենք թուղթը և բաց անենք դա հարթության վրա:

Թղթի այդ բացվածքն ուղղանկյուն է, զորի մակերեսը հավասար է գլանի կողման յին մակերեսույթին, Ուղղանկյան հիմքը հավասար է գլանի հիմքի շրջանագծի (c) յերկարության, իսկ բարձարությունը՝ (H): Հետևապես.

Դլանի կողմանային մակերեվայրը հավասար է իր հիմքի տրցանագծի յեկ բարձրության արտադրյալին:

S կողմ.=C . H=3,14 D . H=6,28 RH (քառ. միավորների):

Դլանի լրիվ մակերեսույթը հաշվելու համար պետք է նրա կողման յին մակերեսույթին ավելացնենք յերկու հիմքերի մակերեսները:



Նկ. 103

Որինակ. Դլանի հիմքի տրամագիծը 20 սմ է, իսկ բարձրությունը՝ 55 սմ եւ Հաշվեցեք այդ գլանի մակերեսույթը:

Կողմանային մակերեսույթը հավասար է $3,14 \cdot 20 \cdot 55 = 3454$ քառ. սմ:

(Շրջանի) հիմքի մակերեսը հավասար է $3,14 \cdot 10^2 = 314$ քառ. սմ:

Ուրեմն, գլանի լրիվ մակերեսույթը հավասար է $3454 + 2 \cdot 314 = 3454 + 628 = 4082 = 4080$. քառ. սանտիմետրի (կլորացրած թվով):

§ 2. ԳԼԱՆԻ ԾԱՎԱԼԸ

Տված ե մի գլան (նկ. 106): Նրա ներսում առանձնացնենք մի փոքրիկ պրիզմա, զորի հիմքը յեռանկյուն կամ քառանկյուն է, իսկ բարձրությունը հավասար է գլանի բարձրության: Պրիզմայի ծավալը հավասար է իր հիմքի մակերեսին, բազմապատկան բարձրությամբ:

Հնդունենք, թէ ամբողջ գլանը լցված է այդպիսի պրիզմաներով, այն ժամանակ գլանի ծավալը հավասար կլինի այդ բոլոր պրիզմաների ծավաների գումարին: Այդ բոլոր պրիզմաները

միևնույն բարձրությունն ունեն, ուրեմն պետք է գումարել բոլոր պրիզմաների հիմքերի մակերեսները, զրանց գումարը հավասար է գլանի հիմքի մակերեսին, և այդ մակերեսը բազմապատկել բարձրությունով:

Նշանակում ե.

Դլանի ծավալը հավասար է իր հիմքի մակերեսին յեկ բարձրության:

Հարցեր յեկ վարժություններ:

1. Ի՞նչ է ներկայացնում գլանի կողմանային մակերեսույթի փափածքը:


2. Վերքան և գլանի կողմանային մակերեսույթը:

3. Վո՞րքան և ծավալը:

4. Դլանի հիմքի տրամագիծը D-ն 20 սմ եւ Դլանի բարձրությունը (H) 40 սմ եւ Գանգ գլանի լրիվ մակերեսույթը:

5. Դլանի շափերն են. D=1,2 ս, իսկ H-L=1,5 մ: Հաշվիք գլանի ծավալը

6. Ուղղանկյունը, փոքր կողմերն են 3,0 դմ և 4,5 դմ, վերածեցին գլանի ծավալը գլանի ծավալը (յերկու զեկու):



Նկ. 106

ԶԱԳԵՐԻ ԱԴՅՈՒԿԱԿՀ

I. ԹԵՇՎԱՐՄԱՔՅԱՆ ՀԱՓԵՐ	$1 \text{ կմ} = 1000 \text{ մետր}$
	$1 \text{ մ} = 10 \text{ դմ} = 100 \text{ սմ} = 1000 \text{ մմ}$
	$1 \text{ դմ} = 10 \text{ սմ} = 100 \text{ մմ}$
	$1 \text{ սմ} = 10 \text{ մմ}$
II. ՄԱԼԻՇԵՎՈՒՐԻ ՀԱՓԵՐ	$1 \text{ կմ}^2 = 1000000 \text{ մ}^2 = 100 \text{ հա}$
	$1 \text{ հա} = 100 \text{ ար}$
	$1 \text{ ար} = 100 \text{ դմ}^2$
	$1 \text{ դմ}^2 = 100 \text{ սմ}^2$
III. ԾԱՎԱԼԻ ՀԱՓԵՐ	$1 \text{ մ}^3 = 1000 \text{ դմ}^3 = 1000000 \text{ սմ}^3$
	$1 \text{ դմ}^3 = 1000 \text{ սմ}^3 = 1000000 \text{ մմ}^3$
	$1 \text{ նմ}^3 = 1000 \text{ մմ}^3$
	$1 \text{ մետրական տոննը} (s) = 10 \text{ ցենտիմետրի}$
IV. ԾԱԲՐՈՒՔՅԱՆ ՀԱՓԵՐ	$(g) = 1000 \text{ կգ-ի}$
	$1 \text{ գ} = 100 \text{ դգ}$
	$1 \text{ կգ} = 1000 \text{ դգ}$
	$1 \text{ լիտր} (l) = 1 \text{ խոր. դմ-ի ծավալին}$
V. ՀԵՂՈՒԽԵՐԻ ԻԵԼ ՀԱՆԴԵՂԵՑԵՐԻ ՀԱՓԵՐ	$1 \text{ հեկտար} (h) = 100 \text{ կմ-ի ծավալին}$
	$1 \text{ հեկտոլիտր} (hl) = 100 \text{ լ}$

ՊԱՏԱՍԽԱՆԵՐ

Եջ 9.

- Նմանությունը հետևյալն ել սահմանափակված են 6 սիմետրով, 2) յերկուսն ել ունեն 12 կող և 8 դաշտի: Տարբերությունն ել — 1) խորանարդի նիստերը քառակուսիներ են և բարուն ել հավասար, մինչդեռ ուղղանկյուններ են և միայն հակադիր զույգ նիստերն են իրար հավասար, 2) խորանարդի բոլոր չափումները հավասար են, զուղաճնուանիստինը՝ տարբեր: Խորանարդը զուգահեռանիստի մի մասնավոր դեպքն ել:
- Նմանությունը — յերկուսն ել քառանկյուններ են, և նրանց բոլոր անկյունները՝ հավասար: Տարբերությունը — Բառակուսությունը բայցը կողմերը հավասար են, իսկ ուղղանկյան միայն հակադիր կողմերն են հավասար: Բառակուսուն ուղղանկյան մասնակի զեպքն ել:
- Այս վօրովհետև չըստուն պրիզմայի մասնակի գեղպէն ել, իսկ խորանարդը վօրածու չըստույի մասնակի զեպք, միաժամանակ հանդիսանում ել և պրիզմայի մասնակի զեպք:
- Վեցանկյուն պրիզման ունի 8 նիստ, վորից 6-ը կողմնային և 2-ը՝ հիմքի: 18 կող վորից 6-ը կողմնային և 6-ական յուրաքանչյուր հիմքին, և 12 զագալի, ամեն սի հիմքին՝ 6-ական:

Եջ 21

- $a+b=9,9 \text{ մ} = 99 \text{ մմ}$:
- $a+b+b=8,9 \text{ մ}$
- $3b\theta b > b-\beta g$, ապա տարբերությունը կլինի $a-b$, իսկ $\beta b\theta b < b-\beta g$ ապա տարբերությունը կլինի $b-a$:
- b հատվածը $a-b$ մեջ պարունակվում է $4,4$ անգամ:
- $a=\frac{n+m}{2}$, $b=\frac{n-m}{2}$

2. 1 ար = 100 քառ. մետրի, ուստի համապատասխան քառասկզբությունը 10 մետր է:
- 1 հա = 10000 քառ. մետրի, ուստի համապատասխան քառասկզբությունը 100 մետր է:
- 3 երկու անգամ եղաց մեծացնելով, յերկու անգամ ել մեծացնում են մակերեսը, իսկ եղաց յերեք անգամ փոքրացնելիս, մակերեսն են փոքրանում են 3 անգամ:
7. 1) 13,5 տառ. սմ. 2) 2,23 տառ. մ. 3) 112 տառ. մմ = 110 տառ. մմ. 4) 0,17 տառ. մ. 5) 25000 տառ. մ. = 250 ար = = 2,5 հա. 6) 2,158 տառ. կմ, 2,2 տառ. կմ:
8. 1008 ար:
9. 250 մ:
10. Քառակուսու պարագիծը հավասար է 600 մետրի, իսկ ուղղանկյանը՝ 650 մետր, հետևապես վերջինիս պարագիծը 50 մետրով ավելի յէ քառակուսուց, կոչանակի ուղղանկյուն հողամասի ցանկապատն ել 50 մետրով յերկար կլինի:
11. 1) 56 տառ. սմ, 2) 29,8 սմ, 3) 4 մմ, 4) 192 տառ. սմ 5) 50 մ:
12. 1) 6 մ, 2) 15 սմ, 3) 1,2 մ:
13. 1,2 տառ. մ.

Եջ 31.

1. 1) Կողմանյին մակ. = 36 տառ. սմ.
լրիվ > = 54 տառ. սմ.
- 2) Կողմանյին > = 400 տառ. սմ.
լրիվ > = 600 տառ. սմ.
- 3) Կողմանյին > = 40² տառ. սմ.
լրիվ > = 60³ տառ. սմ.
3. 2. (8 + 5). 3 = 78 տառ. սմ, կամ 2. (8 + 3). 5 = 110 տառ. սմ, կամ 2. (5 + 3). 8 = 128 տառ. սմ:
4. 1) մոտ. 270 տառ. սմ, լրիվ մակ, մոտ. 420 տառ. սմ,
2) մոտ. 1,5 տառ. մ, > > մոտ. 2,2 տառ. մ
3) մոտ. 7,3 տառ. մ, > > մոտ. 15,4 տառ. մ.
4) մոտ. 50 տառ. մ, > > մոտ. 65 տառ. սմ.
5) մոտ. 20 տառ. մ, > > մոտ. 36 տառ. մ.

3. 2160 խոր. սմ = մոտ. 2,2 խոր. դմ.
5. Կփոքրանա (կմեծանա) 16 անգամ:
7. 64 տառ. սմ:
- 96 տառ. սմ:
8. 3 մետր:
9. 4104 խոր. սմ. մոտ. = 4100 խոր. սմ:
10. 0,70 խոր. մ:
11. Մոտ. 280 կգ:
12. մոտ. 2200 տոննի:
13. 30 լ:
14. 1) 1000 խոր. սմ. 2) 4 խոր. դմ. 3) 1000 լ:
15. 90 կլ:
16. Դահլիճի յերկարությունը՝ 50 մ, բարձրությունը՝ 5 մ:

Եջ 38.

2. 3,3 սմ:
3. Այն կետերը, վորոնց հեռավորությունը կենտրոնից 6 սմ են, գտնվում են շրջանագծից դուրս. Այն կետերը, վորոնց հեռավորությունը կենտրոնից 3 սմ են, գտնվում են շրջանագծի ներսը, իսկ այն կետերը, վորոնց հեռավորությունը կենտրոնից 4 սմ են, գտնվում են շրջանագծի վրա:

Եջ 40.

1. 7,8 սմ. 19,5 սմ:
2. 6 հավասար աղեղների: Վեցանկյուն:
3. Անթիվ բաղմությամբ տրամադերը: Բոլոր տրամադերը հավասար են իրար:
4. Յերկու տրամագծեր կիսում են իրար:
6. Ամենամեծ լարը 21 սմ են:
7. 6 սմ:

Եջ 46.

1. Սուր անկյուն, ուղիղ անկյուն, բութ անկյուն, բացված անկյուն:
6. Ուղղանկյուն կամ քառակուսի:

4. Ուղիղ անկյան $\frac{1}{90}$ մասը կոչվում է անկյունային աստիճան:

6. 1) 30° 2) 150° :

Էջ 55 — 56

- | | |
|-------------------------------------|--|
| 4. $22^\circ 30'$: | 8. $59^\circ 20'$ և $120^\circ 40'$: |
| 5. $45^\circ 25'$ և $33^\circ 5'$: | 9. 40° կամ 140° : |
| 6. $50^\circ 5'$ և $39^\circ 55'$: | 11. $69^\circ 35'$ և $110^\circ 25'$: |
| 7. 40° և 140° : | |

Էջ 57.

2. 60° և 30° , 90° :

Էջ 63.

2. 1428 մր:

4. մոռ. = $6,1$ ֆառ. մ:

6. $7,2$ մ:

Էջ 67.

3. 54 խոր. մ:

Էջ 70.

3. մոռ. = $4,0$ մմ:

4. $1,3$ մմ և $2,2$ մմ:

5. 400 -ից քիչ արելի (425):

6. 12720 կմ:

7. 47 մ:

Էջ 71—72.

2. 53 ֆառ. մմ:

80 ֆառ. մմ:

3. $4,9$ ֆառ. մմ:

4. Պարագիծը հարթակը և շրջանագծի յերկարության՝ $3,1$ մմ-ի,
մակերեսը՝ շրջանի մակերեսի կեսին՝ $3,9$ ֆառ. մմ-ի:

5. 28π ֆառ. մմ:

Էջ 76.

4. 1000π ֆառ. մմ:

5. 540π խոր. դմ:

6. $3,2$ խոր. դմ, $4,9$ խոր. դմ:

8 Ա Ն Կ

I. Յերկարագույն նիմունքն ի համացողություններ

§ 1. Ֆիզիկական և յիբլբաշափական մարժին:	.	3
§ 2. Խորանարդ, ուղղություն գուգահեռանիստ, ուղիղ պընդա:	.	6

II. Աւղիղ զիձ

§ 1. Աւղիղ զիձ, ճառագայթ, հատված բեկալ	.	6
§ 2. Հատվածների չափումը Մաշտաբային քանոն	.	12
§ 3. Հատվածների համեմատումը	.	15
§ 4. Հատվածների գուգապումը	.	17
§ 5. Հատվածների հանումը	.	17
§ 6. Հատվածների բազմապատկումն ամբողջ թվով	.	18
§ 7. Հատվածների բաժանումը	.	19

III. Աւղդանկյան լեկ բառակարգու մակերեսների չափումը

§ 1. Աւղիղ սակերեսների չափումը	.	22
§ 2. Աւղդանկյան և բառակարգու մակերեսը	.	23
§ 3. Աղդանկյուն դիագրամներ	.	23

IV. Աւղդանկյան լեկ խորանարդի մակերեսի լիք ու ծավալը

§ 1. Խորանարդի և ուղդանկյան զուգահեռանիստի փոփածքն ու մակերեսը	28
§ 2. Խորանարդի և ուղդանկյան զուգահեռանիստի ծավալը	31

V. Գլան, օրդանագիծ, օրդան

§ 1. Գլան .	.	35
§ 2. Շրջանագիծ լեկ լրջան	.	38
§ 3. Աղեղ, լար, որպամագիծ, սեկտոր	.	38

VI. Անկյուններ

§ 1. Ակյունն Աւղիղ սուր և քութ անկյուն	.	41
§ 2. Անկյան չափումը Փոխազդիչ անկյուն	.	46

§ 3. Անկյան կառուցումը Անկյունների բաղդատումը	•	•	•	50
§ 4. Դորժողություններ անկյունների հետ	•	•	•	52
§ 5. Սեկտորալին դիմումներ	•	•	•	56

VII. Թեռանկյունների յեվ բազմանկյունների մակերեսների
հաշվումը

§ 1. Յեռանկյուն	•	•	•	58
§ 2. Յեռանկյան և բազմանկյան ժակերեսը	•	•	•	60

VIII. Ուղիղ պրիզմայի մակերեսվույրը յեվ ծավալը

§ 1. Ուղիղ բռանկյուն պրիզմայի մակերեսույթը	•	•	•	64
§ 2. Յեռանկյուն ուղիղ պրիզմայի ծավալը	•	•	•	65
§ 3. Բազմանկյուն ուղիղ պրիզմայի ծավալը	•	•	•	66

IX. Եղանագծի յերկարությունը յեվ ըջանի մակերեսը

§ 1. Երջանագծի յերկարությունը	•	•	•	•	67
§ 2. Երջանի մակերեսը	•	•	•	•	68

X. Գլանի մակերեսվույրը յեվ ծավալը

§ 1. Գլանի մակերեսույթը	•	•	•	•	71
§ 2. Գլանի ծավալը	•	•	•	•	72
Զամերի աղբուսակը	•	•	•	•	73
Պատասխաններ	•	•	•	•	74



ՀՀ Ազգային գրադարան



NL0251546

ԳՐԱԾ 1 Ա.
ԿԱԶՄ 30 Կ.

563



Յ. Օ ԳՈՐՎԻՇ Ի Բ. Վ. ՀԱՆԳՆՈՒ
Начальные сведения по
Геометрии
Гиз ССР Армении, Эревань 1934